

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. սեպտեմբերի 3-ից 7-ը Բրատիսլավա (Սլովակիայի Հանրապետություն)՝
բնապահականության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի
գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՂՎԱԾ ԱՆՁ

Իրինա Ղափլանյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Բնապահականության նախարարի առաջին տեղակալ

3. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Բրատիսլավա (Սլովակիայի Հանրապետություն)
2018թ. հոկտեմբերի 21-ից 24-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
(OECD)

5. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կանաչ գործողությունների ծրագրի հատուկ աշխատանքային խմբի 3-րդ
տարեկան հանդիպում

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպման առաջին նստաշրջանի ընթացքում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ Կանաչ աշխատանքային խմբի ղեկավար Կումի Կուտամորին, շրջակա միջավայրի փոխնախարարի և Եվրոպայի շրջակա միջավայրի գործակալության ներկայացուցիչի հետ միասին բացեցին նիստը: Նիստի բացումն ազդարարվեց Համատեղ շրջակա միջավայրի տեղեկատվական համակարգի /SEIS/ կարևորության վերաբերյալ քննարկումներով: Վերջինիս մաս են կազմում նաև Եվրոպական հարևանության քաղաքականության /ENP/ երկրները: Սլովակիայի շրջակա միջավայրի գործակալությունը հանդիսանում էր պատասխանատու մարմին, որոնք հանդիպման ընթացքում ներկայացրեցին, թե ինչպես Եվրոպական շրջակա միջավայրի տեղեկատվության և դիտարկման էյոնետ ցանցը /Eionet/ կարող է դասակարգել հաշվետվությունները և վերօգտագործել շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալները և տեղեկատվությունը: Նրանք ներկայացրեցին նաև իրենց փորձը և համագործակցության շրջանակները Արևելյան գործընկերության երկրների հետ՝ «Համատեղ շրջակա միջավայրի

տեղեկատվական համակարգի Եվրոպական հարևանության գործիք II Արևելյան ծրագրի» /ENI SEIS East/ շրջանակներում, հիմնականում նշելով.

- Մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել 2017թ.նոյեմբերին, որին մասնակցում էր նաև Հայաստանը: Նրանք նախատեսում են այցելել Հայաստան 2019թ. գարնանը:
- Նրանք արդեն այցելել են տարածաշրջանի 5 երկրներ:
- Զեկույցներից բխող շատ քննարկումներ կենտրոնացած էին Շրջակա միջավայրի իրավիճակի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելու վրա: Քննարկումից պարզ դարձավ, որ Եվրամիության և այժմ նաև Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներից շատերն ունեն այդ օրենքները, սակայն հիմնական տարբերությունն կանոնակարգն է, որի համաձայն այդ հաշվետվությունները պատրաստվում են համապատասխան նախարարությունների կողմից: Օրինակ, Ղրղզստանը զեկույցը ներկայացնում է ամեն երեք տարին մեկ, Ավստրիան՝ ամեն երկու տարին մեկ, իսկ Սլովակիան իր շրջակա միջավայրի վերաբերյալ զեկուցում է ամեն տարի:
- Էյոնետ /Eionet/ ծրագրի շրջանակներում համակարգողները հայտարարեցին, որ շատ կարևոր է, որ անդամ երկրներն ապահովեն որակյալ տվյալներ, որը հասանելի կլինի անգլերենով, քանի որ ոչ միայն Էյոնետ, այլև այլ շահագրգիռ կողմերը պարբերաբար այցելում են անդամ երկրների կայքէջեր և փորձում են ծանոթանալ առկա բնապահպանական տվյալներին:
- Միջգերատեսչական համագործակցությունը կենսական նշանակություն ունի և համապատասխան հաստատությունների հետ աշխատանքի համակարգումը կարևոր է շրջակա միջավայրի մասին որակյալ տվյալների հավաքագրման համար:
- Բելառուսի ներկայացուցիչը նշեց, որ կարևոր է նաև հաշվետվությունների ստանդարտացումը, ինչը կնպաստի կլիմայի և բնապահպանական ֆինանսավորման կարիքների ճիշտ չափմանը:
- Կեսօրին կայացած «Էներգիայի անցում. Աշխատատեղերի և սոցիալական ներգրավվածության հետևանքների մասին» խորագրով նիստի ընթացքում ես ներկայացրեցի մեր դիրքորոշումը:
- Մոլդովայի և Ղազախստանի զեկույցներից հետո պարզ դարձավ, որ Հայաստանը տարածաշրջանային այս երկու երկրներից շատ հեռու է իր էներգետիկ դիվերսիֆիկացիայով և էներգետիկ կառույցներում վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման գործում: Օրինակ, Մոլդովան ներկրում է իր էներգետիկ ռեսուրսների 90% -ը, իսկ Ղազախստանը՝ լինելով ածուխ, նավթ և գազ արտադրող երկիր, կհանդիպի մեծ դժվարությունների, դեպի ցածր ածխածնային տնտեսություն անցում կատարելիս: Այդ առումով ես կցանկանայի վերահաստատել Հայաստանի ներուժը՝ նեգրավվելու կլիմայի փոփոխության ոլորտում ֆինանսական աջակցություն և ներդրումներ՝

երկրի մասշտաբով ցածր ածխածնային տնտեսության անցման հաջողված օրինակների հիման վրա: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա կարծում եմ, մենք պետք է դիտարկենք վերջինիս որպես լավ գործընկեր քանի որ մենք կարող ենք ներգրավել տարածաշրջանային նախագծերի, հաշվի առնելով, որ մենք երկրի հետ համագործակցում ենք էլեկտրաէներգիայի առևտրի բնագավառում:

- Ավստրիայի շրջակա միջավայրի գործադիր տնօրեն Գեորգ Ռոբերինգի զեկույցը շատ հետաքրքիր էր: Նա ցածր ածխածնային անցման մարտահրավերների վերաբերյալ մի քանի կարևոր, իրատեսական տվյալներ ներկայացրեց, ինչպես նաև Ավստրիայի կողմից ներդրված նորարարությունները: Նա խոսեց Ավստրիայում վերջերս կառուցված «էներգիա+շենքեր»-ի մասին, որը լիովին ծակծկված է ֆոտոգալվանայով և արտադրում է ավելի շատ էներգիա, քան այն սպառում է՝ վերադարձնելով այն ցանցին: Պարոն Ռոբերինգի հետ զրույցում հարցրեցի, թե որն է ծախսերի տարբերությունը «էներգիա+շենքեր» և սովորական կառույցի միջև և որն է «ներդրումների վերադարձի» /ROI/, «էներգիա+շենքեր» ժամանակացույցը: Նա ասաց, որ չունի տվյալներ, սակայն մեզ կուղարկի: Դա կարող է լինել շատ հետաքրքիր պրոեկտ՝ ինչպես մասնավոր սեկտորի համար (օրինակ՝ IDEA հիմնադրամը, «Ամերիա» բանկը, քանի որ Հայաստանում նրանք ունեն առաջին «կանաչ կառույցները», այսինքն՝ ամբողջությամբ էներգաարդյունավետ շենքեր), այնպես էլ կառավարության համար:

- Պարոն Ռոբերինգի զեկույցի մեկ այլ կարևոր տեղեկություն վերաբերում էր նրանց զգալի ներդրմանը H2 էներգիայի արտադրության ծրագրերին:

- Համաձայն վերոնշյալ զեկույցի, Ավստրիայի կառավարությունը նախատեսում է շուրջ 50 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ կատարել նոր նախագծում ուղղված «կանաչ ջրածնին»: Ընդհանուր առմամբ, նա նշել է, այն փաստը, որ «կանաչ ջրածինը» ամենամաքուր էներգիայի արտադրության աղբյուրն է, և մինչև 2050թ. այն կդառնա Եվրոպայի համար առաջնային աղբյուրներից մեկը՝ չնայած դրա արժեքին: Հայաստանը նույնպես պետք է ուսումնասիրի այդ հնարավորությունը և հետաքրքրվածություն ցուցաբերի: Ես առաջարկում եմ այն ուսումնասիրել կամ ընդլայնել հետազոտական հաստատությունների/այլ շահագրգիռ կողմերի համար՝ այս ոլորտում մեր հնարավորությունները հետազայում հետազոտելու համար:

- Եվրոպայում շրջանակային տնտեսության և թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկատվությունից ակնհայտ է դառնում, որ ԵՄ-ն տարեկան արտադրում է 23 միլիոն տոննա պլաստիկ, և դրա միայն 30 տոկոսն է վերամշակվում: Այս տարի Չինաստանը հայտարարել է, որ ԵՄ-

ից այլևս չի գնելու պլաստիկ, և որ ԵՄ-ն կանգնած է մեծ խնդրի առաջ, որի համար հնարավորինս շուտ անհրաժեշտ է լուծումներ գտնել:

Շրջանակային տնտեսությունը ստեղծում է նոր աշխատատեղեր օրինակ՝

- Հասարակ աղբավայրը ստեղծում է 1 աշխատատեղ 1000 տոննայի դիմաց, մինչդեռ կառավարվող և աղբը վերամշակող աղբավայրերը ստեղծում են 6-ից 13 աշխատատեղ՝ 1000 տոննայի դիմաց:

Այլ հետաքրքիր հնարավորություններից է աղբի արդյունավետ կառավարումը օրինակ՝

- համակարգչի 1 տոննա տպագիր էլեկտրասարքավորումներում (PWB) կա 40-800 անգամ ավելի ոսկի է, քան 1 տոննա հանքաքարում: Այս առումով Եվրամիությունը ձեռնարկում է հետազոտություն, թե ինչպես պետք է պատշաճ կերպով ոսկի «կորզել» տպագիր էլեկտրասարքավորումներից (PWB):

• Եվրոպական հանձնաժառովի շրջակա միջավայրի գլխավոր տնօրեն պարոն Անջեյ Յանուսևսկին խոսեց շրջանաձև տնտեսության և տարբեր օրենսդրական միջոցների մասին, որոնք իրենք կիրառում են թափոնների կրճատման և թափոնների դիվերսիֆիկացիան առավել արդյունավետ կարգավորելու համար: Օրինակ, նա խոսեց օրենսդրական միջոցների մասին, որոնք կհանգեցնեն օգտագործման համար պիտանի թափոնները չթաղելուն՝ մինչև 2030թ.-ը: Ամբողջ Եվրոպայում նրանք նախատեսում են առանձնացնել թղթային, մետաղական, պլաստմասե, ապակյա և օրգանական թափոնները (օրգանական թափոններն առանձնացված չէին բոլոր ԵՄ երկրներում) մինչև 2023թ.-ի ավարտը, և վտանգավոր թափոններն ու տեքստիլները մինչև 2024թ.-ը: Պարոն Յանուսևսկին հետ հանդիպման ընթացքում ես հայտնեցի պլաստիկի վերաբերյալ մեր քաղաքականության, անհրաժեշտ օրենսդրության կարիքի, ինչպես նաև ճանապարհային քարտեզի մասին: Ես նաև հարցրեցի, արդյոք նրանք արդեն պատրաստել այլ այլընտրանքային տարբերակներ 15 միկրոնի ներքո պլաստիկի համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց քննարկել հետագա համագործակցության ուղիները:

- Առավոտյան նիստում Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ռազմավարական պլանավորման բաժնի պետ Անետա Բաբայանը խոսեց Կանաչ տնտեսության վերաբերյալ իր զեկույցում նշված հիմնական թեմաներից մեկի՝ Կայուն զարգացման նպատակների /SDG Innovation Lab/ նորարական լաբորատորիայի մասին, որը աշխարհում իր տեսակի մեջ և Կայուն զարգացման նպատակների /SDG/ իրականացման

նորարարական մոդելի համար առաջինն է (այն, նստաշրջանի մասնակիցների համար հետաքրքրություն առաջացրեց): Տիկին Բաբայանը նշեց նաև, որ Հայաստանի տնտեսությունը և մոտեցումը դեպի կանաչ տնտեսություն չպետք է գրանցեն զարգացում, փոխարենը պետք է հասնեն վերջինիս:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

- Երկկողմ հանդիպում եմ ունեցել Եվրոպայի բնապահպանական գործակալության Եվրոպական հարևանության քաղաքականության գործունեություններ իրականացնող խմբի ղեկավար Գալինա Գիորգեվա Հրիստովայի հետ, որի ընթացքում խոսեցինք Կոպերնիկոս /Copernicus/ ծրագրի մասին, և արդյոք կա վերջինիս միանալու հնարավորություն: Տիկին Հրիստովան ասաց, որ հիշում է, որ ՀՀ բնապահպանության նախարարը այդ մասին բարձրաձայնել է Լյուքսեմբուրգում, բայց նա հնարավորություն չի ունեցել հետևել դրան: Նա նշեց, որ կարող են պոտենցիալ մարտահրավերներ լինել այդ ծրագրի շուրջ, քանի որ այն Հարևանության քաղաքականության մաս չի կազմում, և ցանկացած համագործակցություն անհրաժեշտ է իրականացնել Հանձնաժողովի համակարգման ներքո: Նա նաև նշեց, որ իրենք մեծամասամբ հանդիսանում են քարտեզագրող գործակալություն, և եթե համագործակցությունը հնարավոր է, ապա այն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հայաստանի կառավարության հետ: Ես նշեցի, որ մենք սերտորեն համագործակցում ենք Կադաստրի հետ, և եթե նրանք համապատասխանեն համագործակցային փաթեթին, ապա նրանք կարող են միանալ ծրագրին, և մենք կարող ենք հաղորդակցվել: Նա ասաց, որ կապ կհաստատի մեզ հետ:

- Հանդիպում ունեցա նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ բնապահպանական տնօրինության Կանաչ աճի և գլոբալ հարաբերությունների քաղաքականության վերլուծաբան Գայ Հալփերնի հետ: Նա խոսեց իրենց նոր նախագծի մասին, որը կոչվում էր «Կանաչ աճ և հանքարդյունաբերություն- Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում հանքարդյունաբերական աշխատանքների բնապահպանական ցուցանիշների բարելավմանն ուղղված քաղաքականության մոտեցումներ»:

Այս ծրագրի շրջանակներում մենք քննարկեցինք հին և լքված հանքավայրերը և պոչամբարները ռեկուլտիվացիա անելու վերաբերյալ հնարավոր համագործակցությունը կամ գնահատել և խորհրդակցություն կազմակերպել Հայաստանի հանքարդյունաբերության օրենսդրության վերաբերյալ: Պարոն Գայը մեզ կուղարկի այս ծրագրի էլեկտրոնային

տարբերակը, որից հետո կքննարկենք համագործակցության հնարավոր տարբերակները:

- Երկկողմ հանդիպում եմ ունեցել ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության շրջակա միջավայրի վարչության Արդյունաբերական ռեսուրսների արդյունավետության բաժնի միջազգային ծրագրի համակարգող Տատյանա Չեռնյավսկայայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկել ենք Արևելյան գործընկերության «Կանաչ քաղաքներ» ծրագիրը, և նա ասաց, որ ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը /UNIDO/ շահագրգռված է շարունակել այս ծրագրի իրականացումը:

- Հանդիպում եմ ունեցել նաև Մայքլ Սուֆթերի և Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության գործադիր տնօրեն Գեորգ Ռոբերինգի հետ: Մենք մանրամասն քննարկեցինք Ամուսարի շուրջ ստեղծված իրավիճակը և այն ուղիները, որոնց միջոցով Ավստրիան և ԵՄ-ն կարող են աջակցել Հայաստանին: Պարոն Գեորգ Ռոբերինգն ասաց, որ Եվրամիության որոշ երկրների շրջակա միջավայրի գործակալություններ մեծ փորձ և հստակ օրենսդրություն ունեն հանքարդյունաբերության վերաբերյալ, և այդ առումով նրանք կարող են նաև օգնել պետական մարմիններին: Պարոն Ռոբերինգն ասաց, որ կարող է խոսել Շվեդիայի Շրջակա միջավայրի գործակալության հետ, որոնք հանքարդյունաբերության ոլորտում մեծ փորձ ունեն և տեսնել, թե արդյոք նրանք կարող են օգնել Ամուսարի անկախ գնահատման անցկացման հարցում:

- Կրկին հանդիպում եմ ունեցել Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության ներկայացուցիչ պարոն Գայ Հալպերնի հետ: Պարոն Գայն ասաց, որ իրենք շահագրգռված են Հայաստանի հետ աշխատել և աջակցել մեզ հանքարդյունաբերության օրենսդրության մշակման հարցում: Հանդիպման ընթացքում անդրադարձանք նաև Հայաստանում լքված հանքավայրերի և պոչամբարների հարցին, ես հետաքրքրվեցի, թե արդյոք նրանք ունեն ծրագրեր դրանց լուծման համար: Նա ասաց, որ ներկայումս նրանք ուսումնասիրում են հնարավորությունները՝ այսպես կոչված «երկրորդային հանքարդյունաբերության» ոլորտում.

- դա գործընթաց է, որի արդյունքում պոչամբարներից կորզվում են ծանր մետաղները: Ես ասացի, որ մենք հետաքրքրված ենք ավելի շատ տեղեկանալ Հայաստանում գործընթացի և կիրառելիության հնարավորությունների մասին:

- Հանդիպում եմ ունեցել Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության ներկայացուցիչ՝ Մայքլ Սութթերի և TUV Ավստրիայի ներկայացուցիչ Ռոբ Բեքերի հետ, որը TUV-ի բիզնեսի զարգացման առաջին փոխնախագահն է: Մենք խոսեցինք Ամուսարի շուրջ ստեղծված իրավիճակի մասին: Պարոն Բեքերը ներկայացրեց TUV-ն և իրենց, գործունեության շրջանակը: TUV Ավստրիան և Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալությունն առաջիկայում մեզ կներկայացնեն իրենց կողմից առաջարկվող հնարավոր աջակցությունը՝ Ամուսարում անկախ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման անցկացման վերաբերյալ:

8. Ձեռք բերված ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հատուկ նիստի ընթացքում Ուկրաինան ներկայացրեց իր դիրքորոշումը Եվրոպական Միության հարևանության երկրներում Համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգի /SEIS/ սկզբունքների խթանման վերաբերյալ և վերջին զարգացումները՝ ԵՄ Ասոցացման համաձայնագրի պարտավորությունների համաձայն:
- Դրանից բխող առաջարկությունը հետևյալն է, հաշվի առնել շրջակա միջավայրի վերաբերյալ հաշվետվությունների ներքին օրենսդրության բարելավուման հարցը, բացի Եվրոպական հարևանության գործիքի /ENI/ և Համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգի /SIES/ գործընթացներից, լրբինգ անել կառավարությանը հատկացնելու անհրաժեշտ բյուջե՝ ապահովելու տարեկան կամ կիսամյակային հաշվետվություն երկրի շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության իրավիճակի վերաբերյալ: Պարտավորության այս տեսակը կարող է ներգրավել ֆինանսական և տեխնիկական աջակցություն ԵՄ-ից:
- Մյուս առաջարկությունը և տեսակետը պաշտոնական կերպով ԵՄ-ի և նրա համապատասխան կառույցների հետ հաղորդակցվելն է և մեր շահագրգռվածությունը Կոպերնիկոս /Copernicus/ պլատֆորմի պաշտոնական ներկայացուցիչ դառնալու հարցում: Կարևոր եմ համարում առավել մանրամասն հետաքրքրվել ԵՄ ներկայացուցիչներից, թե ինչպես նախաձեռնել այս գործընթացը:
- Բաթումիում 2016թ. Հատուկ նստաշրջանի ընթացքում բոլոր անդամները պարտավորություն են ստանձնել, որպեսզի մինչև 2021թ.-ը Համատեղ բնապահպանական տեղեկատվական համակարգ /SEIS/ գործի մասնակից բոլոր երկրներում: Այս առումով անհրաժեշտ է գնահատենք, թե որքանով ենք հեռու այս պարտավորության կատարումից:
- Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչը հայտարարեց, որ գերադասելի է ունենալ քաղաքացիների հետ ռազմավարական հաղորդակցություն: Տվյալների և հաշվետվությունների տրամադրումը

բավարար չէ այս գործընթացի համար, պետք է լինի ավելի կառուցողական և ընդգրկուն հարթակ տեղեկատվության մշակման գործընթացում քաղաքացիների ներգրավման, քաղաքականության մշակման և իրականացման հետ կապված հետագա գործողությունների համար: Այս կապակցությամբ կառաջարկելի աշխատել ԵՄ-ի և/կամ այլ գործընկերների հետ, որպեսզի մշակենք քաղաքացիական հասարակության հետ շրջակա միջավայրի տեղեկատվության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ ռազմավարական հաղորդակցության համար հնարավոր նախագիծ:

- Եվրամիության հանձնաժողովի ներկայացուցիչը ևս հաստատեց, որ կարևոր է ընդգծել ոչ միայն այն տեղեկատվությունը, որը ներկայացնում էք, այլև ինչպես եք վերջինս ներկայացնում: Անհրաժեշտ է դյուրին դարձնել տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև պետք է հստակորեն առանձնացնել տրամադրվող տեղեկատվությունը և տվյալների մեկնաբանումը՝ այն առումով, թե ինչ նշանակություն ունի այն երկրի համար և ինչ լուծումներ պետք է տա երկիրը, երբ արդեն մտնում է քաղաքականության մշակման ոլորտ:

- Առավոտյան և կեսօրի նիստերի ընթացքում Կոմի Կուբամորին խոսեց ազգային մակարդակի քաղաքականության երկխոսության մասին, որը կարող է ներայացվել ըստ պահանջի: Այս մասին նշված էր օրակարգի 8-րդ կետում: Նիստի ընթացքում երկրները կարող են միջամտել և արտահայտել իրենց շահագրգռվածությունը: Ես հետաքրքրվեցի հետագա ծրագրերի վերաբերյալ, որոնք ընդգրկում էին բոլոր 4 ընդարձակ ծրագրային ոլորտները.

1. ազգային կանաչ տնտեսության երկխոսություն և ռազմավարություն,
2. կանաչ ֆինանսներ և ներդրումներ,
3. էկոլոգիական, տնտեսական և ոլորտային քաղաքականություն կանաչ աճի համար,
4. Զրի կառավարման հզորացում:

Հաջորդ քայլերը կլինեն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ «Կանաչ աշխատանքային խմբի» հետ, որը կապահովի աշխատանքների շրջանակը և բոլոր գործողությունները: Միևնույն ժամանակ, նրանք կկարողանան կապ հաստատել մեզ հետ առանձին ծրագրերի առնչությամբ, որը կխթանի Կլիմայի ֆինանսավորման կարիքների գնահատումը: Այս առնչությամբ ես խոսեցի Տակայոշի Կատոյի հետ՝ հետագա քայլերի վերաբերյալ:

- Նիստի ընթացքում մեկ այլ կարևոր իրադարձություն էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ շրջակա

միջավայրի հարցերով տնօրեն պարոն Ռուդոլֆո Լասին հայտարարությունը, այն մասին, որ Փարիզյան համաձայնագրի համաձայն 2020թ.-ից սկսած 100 միլիարդ դոլարի պարտավորությունը բավական չէ, և որ համաշխարհային հանրությունը պետք է տրիլիոնավոր դոլարներ տա Կլիմայի փոփոխության վերաբերյալ խնդիրների լուծման համար ջանքեր գործադրելու հարցում: Ըստ Լեյսի, կլիմայի փոփոխության դեմ պայքարի ողջ մոդելը պետք է վերանայվի: Այս համատեքստում, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության /OECD/ շրջակա միջավայրի տնօրենը նշել է, որ ՏՀԶԿ-ին, ինչպես նաև այլ կազմակերպություններին և միջազգային ֆինանսական կառույցներին, անհրաժեշտ է ստեղծել նոր տնտեսապես շահավետ և ֆինանսապես կայուն ծրագրեր ցածր ածխածնի և կայուն աճի վերաբերյալ:

- Շատ քննարկումներ են ծավալվել ընդլայնված արտադրողների պատասխանատվության վերաբերյալ, որը հանդիսանում է շրջանակային տնտեսության հաջող մոդելների բանալին: Էկո-դիզայնի խթանումը և վերամշակման բազմակողմանիությունը, թափոնների տեսակավորման արդյունքում, դրական են ազդում սպառողների վարքագծի վրա: Գաղափարը կայանում է նրանում, որ աստիճանաբար վերամշակման և թափոնների կառավարման ծախսերը տեղափոխվեն համայնքներից արտադրողներին և, ի վերջո, սպառողների վրա: Ընդլայնված արտադրողների պատասխանատվության /EPR/ առավելագույն սխեմաները պարտադիր են ամբողջ Եվրոպայում և կդառնան ավելի խիստ: Այս առումով մենք պետք է հաշվի առնենք Հայաստանի համար շրջանակային տնտեսության մոդելի մշակումը, որով մենք կարող ենք զարգացնել Ընդլայնված արտադրողների պատասխանատվության /EPR/ հաջող մոդելները: Ես կառաջարկեյի իրականացնել վերոնշյալը Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ, մեր դոնոր գործընկերների աջակցությամբ և Կայուն զարգացման նպատակների /SDG Innovation Lab/ նորարական լաբորատորիայի տեխնիկական աջակցությամբ:

Բնապահպանության

 Invalid signature

X 

Irina Ghaplanyan
First Deputy Minister of Nature Protection o...
Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366

նախարարի առաջին տեղակալ՝

Իրինա Ղափլանյան